Փոփոխություններ ՀՀ Աշխատանքային օրենսգրքում /Գործատուի գործադիր մարմնի անդամի հետ աշխատանքային պայմանագրի լուծման առանձնահատկությունները

Կոնտակտային անձինք

Սերգի Կոբախիձե
Գործընկեր
Հարկային և իրավաբանական բաժին
sergi.kobakhidze@pwc.com

Ալլա Հախնազարյան
Իրավաբանական պրակտիկայի ղեկավար
Հարկային և իրավաբանական բաժին
alla.hakhnazaryan@pwc.com

Սերգեյ Սարուխանյան
Ավագ խորհրդատու
Հարկային և իրավաբանական բաժին
sergey.sarukhanyan@pwc.com

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) Աշխատանքային օրենսգրքում (այսուհետ նաև՝ «Օրենսգիրք») 03 մայիսի 2023 թվականին ընդունված փոփոխություններով սահմանվել է իրավաբանական անձանց իրավունքը գործադիր մարմինների (միանձնյա և կոլեգիալ) անդամի հետ աշխատանքային պայմանագիրը լուծելու ոչ թե աշխատանքային օրենսդրությամբ սահմանված ընդհանուր կարգով, այլ հաշվի առնելով համապատասխան ոլորտը կարգավորող օրենքով սահմանված առանձնահատկությունները:

Օրենսգրքի ներկայիս խմբագրությամբ իրավաբանական անձի և գործադիր մարմնի անդամի միջև կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու որևէ առանձնահատկություն սահմանված չէ, այնուամենայնիվ ՀՀ դատական պրակտիկան և ոլորտը կարգավորող օրենսդրությունը զարգացել են այն ուղղությամբ, որ իրավաբանական անձի գործադիր մարմինների (միանձնյա և կոլեգիալ) կնքվող պայմանագիրը պետք է դիտարկվի որպես «յուրահատուկ» տեսակի (sui generis) աշխատանքային պայմանագիր: Սա նշանակում է, որ, օրինակ, տնօրենը չի կարող ընկալվել որպես սովորական աշխատող, քանի որ նա յուրահատուկ կարգավիճակ ունեցող կորպորատիվ մարմին է, և Օրենսգրքի բազմաթիվ դրույթներ նրա նկատմամբ գործնականում չեն կարող կիրառվել:

Իրավաբանական անձի սեփականատերը պետք է օժտված լինի որոշակի իրավազորություններով, որոնք վերջինիս հնարավորություն կտան իր տնտեսական գործունեությունն առավել արդյունավետորեն իրականացնելու և ընկերությունում իր ներդրած գույքը հնարավորինս ռացիոնալ օգտագործելու նպատակներով ինչպես նշանակել (ընտրել) ընկերության [տնօրեն], այնպես էլ անհրաժեշտության դեպքում դադարեցնել [նրա] հետ հարաբերությունները:*

Այսպիսով, լրացնելով Օրենսգրքի 109-րդ հոդվածը նոր՝ 4-րդ կետով օրենսդիրը համապատասխանեցրել է Օրենսգիրքը ՀՀ դատական պրակտիկային, և ոլորտը կարգավորող օրենսդրությանը, ինչի արդյունքում այս մասով սահմանվել է որոշակիություն:

Նոր կարգավորմամբ հստակեցվել է իրավաբանական անձ գործատուների իրավասությունը իրենց հայեցողությամբ նշանակել և ազատել գործադիր մարմնի (միանձնյա և կոլեգիալ) անդամին չներկայացնելով որևէ պատճառաբանություն:

Ավելի մանրամասն տեղեկատվության համար խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ

* ՀՀ Վճռաբեկ դատարանի թիվ /ԵԿԴ/1896/02/13/ որոշում

© 2023 PwC. Բոլոր իրավունքները պահպանված են

Amendments to Labour Code of RA /Specifics to termination of labor contract with the member of the executive body of the employer

Contacts

Sergi Kobakhidze
Partner
Tax, Legal and People Services
sergi.kobakhidze@pwc.com

Alla Hakhnazaryan
Head of Legal Practice
Tax, Legal and People Services
alla.hakhnazaryan@pwc.com

Sergey Sarukhanyan
Senior Associate
Tax, Legal and People Services
sergey.sarukhanyan@pwc.com

If you are interested in additional information, please contact us.

As per the amendments adopted on 03 May 2023 to the Labor Code of the Republic of Armenia (RA) (henceforth referred to as "the Code"), legal entities will have the right to terminate an employment contract with a member of the executive body - be it an individual or collegial entity - in a method divergent from labor legislation. The amendment will allow an employer to terminate the employment contract considering the specifics defined by the law regulating the relevant field.

The current version of the Code does not specifically outline the procedure for terminating an employment contract between a legal entity and a member of the executive body, however, the judicial practice and laws regulating the field in the RA has established that the contract entered into with the executive body (be it an individual or collegial) should be regarded as a unique type of employment contract, commonly known as a "special" or sui generis contract. This means that for instance, the, director cannot be considered as a regular employee because he/she holds a unique status as a corporate body. Consequently, several provisions of the Code may not be applicable to the director in practice.

The founders of a legal entity shall have specific powers that enable them to effectively conduct their economic activities and maximize the efficient usage of their invested property within the company. This includes the process of appointing (selecting) a director for the company and, if necessary, terminating the relationship with the director.*

Hence, by adding a new part 4 to Article 109 of the Code, the legislator has harmonized the Code with the judicial practice and laws regulating the field in the RA, thereby establishing a certainty with this regard.

The new regulation clarifies that employers (legal entities) have power to appoint and dismiss a member of the executive body (be it an individual or collegial) at their own discretion, without the requirement of providing any justification for their decision.

* Decision No /ԵԿԴ/1896/02/13/ of the Court of Cassation of RA

© 2023 PwC. All rights reserved.